

լով փութաջանութիւն կունենան լեզուն դուրս քաշելու: Այս գործողութեան վերայ ա. Պատրիարքը կսթափի, և բժիշկք վերքը քննելով կը տեսնեն որ Աստուծոյ լատուկ շնորհիւ վէրքը միայն այն է՝ որ կապարեալ գնդակը կրնակի կողմերն աջ ուսի միսին մէջէն անցեր, և միւս կողմէն դուրս ելեր է, առանց ոսկորի մը հանդիպելու և առանց երակ մը պալթած լինելու:

«Այս լուրը այն սարսափելի ձիւնին բուքին կը տարածուի մայրաքաղաքի ամեն կողմը և ամէն կողմէ պատրիարքարան կը թափին, վեհ. Սուլթանը անմիջապէս իւր թիկնապահը և բժիշկը կը ղրկէ և իւր ցաւը կը լալտնէ 5 օր շարունակ. ամենազգի ժողովուրդ և պատրիարքունք և դեսպանք և վաճառականք դեռ մինչև ցարդ շարունակ այցելութիւն տալով որպիսութիւնը կը հարցունեն: Աշխարհի ամեն կողմի հալեւրէն հեռագիրներ կը տեղան:

«Ոճրագործն բնիկ Կարնեցի և ալժմ ի Պօլիս վերաբնակեալ Մկրտիչ խաչիկեանի որդին է 20—21 տարեկան Յակոբ անունով:

ԲԵՈՒԼԻՆԻ ՀԱՅ ՅՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

Արտասահմանում ապրող հայերն ալժմ ամեն միջոց գործ են դնում, որ եւրոպացիք ճիշտ գաղափար կազմեն հայերի մասին և ազատուեն այն նախապաշարուած հայեացքներից, որ տարածուած է վաղուց ի վեր Եւրոպայում. այսպէս օրինակ Եւրոպացիք կարծում են թէ հայերը բոլորն էլ վաճառականներ են ու հրէաների նման ոչ մի տեղ երկրագործութեամբ չեն պարապում: Եւրոպացիք մեծ և վաճառաշահ քաղաքներում տեսնելով հայերին և նրանց նիստ ու կացը՝ սխալմամբ ամբողջ հայութեան մասին են գաղափար կազմել և վաշխառու, կեղծաւոր, խորամանկ անպատուաբեր ածականները ամբողջ ազգի վրէն փաթաթել, մինչդեռ այդ լատկութիւնները կարելի է վերադրել հայութեան շատ չնչին մասին:

Ահա այսպիսի թիւր կարծիքները փաստօրէն ջրելու նըպատակով՝ Բեռլինում մի քանի հալ և դերմանացի գիտնականների ձեռնարկութեամբ կազմակերպուած է հայկական ցուցահանդէս, որպէսզի հալ մտքի և ձեռքի արտադրութիւններն իւր աչքով իսկ տեսնելով՝ Եւրոպացին համոզուի, որ հայը միմիայն վաճառականութեամբ չէ պարապում, այլ և գիտութիւններով, արուեստներով, արհեստներով, արդիւնաբերութեամբ, երկրագործութեամբ և ալլն: Մէջ խօսքով այդ ցուցահանդիսից պէտք է երևալ հալ ժողովրդի քաղաքակրթութեան աստիճանը:

Յուցահանդիսի սկզբնական գաղափարը պատկանում է

պ. Բ. Խալաթեանցին, որ և հաղորդում է՝ ընդհանրութեան հետեւալը. ցուցահանդէսը հետու է որևէ քաղաքական նպատակից, մեր նպատակն է Գերմանիայի մայրաքաղաքում 1903 թ. կաղմակերպել մի ցուցահանդէս, որով երևան գալ հալոց անցեալ և ներկալ կեանքի քաղաքակրթութիւնը.

Ցուցահանդիսի ծրագրում հետեւեալ բաժանմունքները կլինեն. I երկրի արդիւնաբերութիւնը. ա. հանքեր և մետաղներ, բ. նաւթ. գ. բամբակ. դ. բուրդ. ե. մետաքս զ. գինի և բմպելիք. է. չորացրած միւրք. ր. կաթնալին տնտեսութիւն թ. ձուկը. II. արուեստ և ձեռագործ. ա. անկուած, բ. գորգ և ալլն դ. ոսկեղէն իրեր. III. Հին և նոր արուեստ. ա. ճարտարապետութիւն և քանդակագործութիւն. բ. մոդալիկ գ. նկարչութիւն. IV. ազգագրութիւն. ա. ժողովրդական կեանք, գործունէութիւն և բնակարան. բ. զգեստ. գ. մտաւոր կեանք. առականեր, հեքիաթներ, երգեր և ալլն. V. Հալկական հնագիտութիւն. ա. դրամներ. բ. կնիքներ և ալլն. VI. Գրականութիւն և մամուլ. VII. Հալկական թատրոն (բեմի վրայ):

Մտադրութիւն կալ նոյնպէս ցուցահանդիսի միջոցին մի շարք դասախօսութիւններ կարդալ հալերի մասին և ալ չնպատակի համար կհրաւիրուեն լալտնի գիտնականներ և ճանապարհորդներ:

Նուիրատութիւններ կալելի է ուղարկել ցուցահանդիսի կաղմակերպութեան համար հետեւեալ հասցեով. Berlin. Deutsche Bank (Behrenstrasse), Herrn Dr. P. Rohrbach und Dr. B. Chalatzianz. Իսկ իրերը պէտք է ուղարկել՝ Dr. B. Chalatziantz und Dr. F. Finck, Berlin, Kantstrasse 94.

Ցուցահանդիսի մասնաժողովի անդամներն են դր. Անդրէաս (իւրաւաբան) դր. Լիպսիուս (գերմանական արեւելեան առաքելութեան գիրեկտոր), պրոֆ. Պէլէնի (սանսկրիտագէտ), պրոֆ. Նդ. Մալէր (պատմաբան), պրոֆ. Գելդէր (արուեստագէտ), դր. Լեօլլէնֆէլդ (Շիլլէր թատրոնի գիրեկտոր), պրոֆ. Բէգիգէր (ազգագրական ընկերութեան նախագահ) և դր. Ֆինկ (լեզուագէտ և հալագէտ):

Յանկանում ենք լաջողութիւն:

ՀԱՆԳ. ՄԵԼԻՔ ՍԱՓԱՐԵԱՆԻ ԺԱՌԱՆԳՆԵՐԻ ՆՈՒԻՐԱ- ԲԵՐՈՒԹԻՒՆ

Անցեալ Դեկտեմբերի վերջին Վարչալալում վախճանուելով երիտասարդ վաճառական Մելիք Սափաբեանցը բերուեցաւ Խաղու, ուր և հողին լանձնուեցաւ. Հանգուցեալը բնիկ Շուշեցի էր, 33 տարեկան, իւր ուսումը ստացել էր տեղական թեմ. Դպրոցում և նուիրելով իրան վաճառականութեան՝ իւր